

## ՈՌԻՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆ ԱՆՑԱԾ ԱՌԱՋԻՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎՐԱ

### ԿԱՐԱՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին հաջորդած երկու տարիներին ռուսական քաղաքական շրջանակները որդեգրեցին «...ռուսահայերից կամավորական խմբեր կազմակերպելով՝ ուղարկել Տաճկահայաստան»<sup>1</sup> ռազմավարությունը, որը նպատակ ուներ թուրքահայ կամավորական խմբերով մշտապես անհանգիստ վիճակ ստեղծել Օսմանյան կայսրությունում, և հարմար առիթի դեպքում «Ռուսաց բանակը անմիջապես սահմանն (ռուս-թուրքական – Կ. Յ.) անցնելու էր նորից»<sup>2</sup>: Այս բանը հաստատվում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերիին ուղղված՝ Էրզրումի անգլիական հյուպատոս Լեյարդի 1879 թ. օգոստոսի 8-ի փակիր զեկուցագրով, որում մասնավորապես ասվում էր. «Ռուսական իշխանությունները Էրզրումի վիլայեթի ճակատամասում ռազմական պատրաստություններ են տեսնում և դրդում են հայերին ոտքի ելնել, ինչը հայերի մոտ շարժում է առաջացրել»<sup>3</sup>:

Ցարական արքունիքի այս քաղաքականությունը համընկնում էր արևելահայության՝ իրենց արևմտահայ եղբայրներին օսմանյան լծից ազատագրելու ձգտմանը: Եվ ահա Բեռլինի վեհաժողովից հետո հայկական միջավայրում ծայր է առնում կամավորական մի շարժում, որին անդամագրվում է ժամանակի հայրենասեր երիտասարդության մի ստվար մաս: Շարժման մասնակիցներն իրենց առջև խնդիր էին դրել զլուխ բերել սուլթանական բռնակալության տակ հեծող արևմտահայության ազատագրության գործը:

Այս պայմաններում մեծանում է Կարսի մարզի դերը: Շնորհիվ աշխարհագրական նպաստավոր դիրքի՝ Կարսը և նրա հարակից շրջանները առանձնահատուկ նշանակություն են ստանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին ծավալված հայ ազատագրական զինյալ պայքարում: Կարսի մարզը ոչ միայն Երկիր մեկնող մարտական ու զինատար խմբերի կարևոր հանգրվան էր, այլև Յ. Յ. Դաշնակցության այն կարևոր դարբնոցը, որտեղ իրենց մկրտությունն են ստացել հայ ազատագրական պայքարի աչքի ընկնող շատ գործիչներ:

Առաջին հայ կամավորները, որոնց մեծ մասը ուսանողներ էին, 1878-1880-ական թթ. կազմելով փոքրիկ խմբեր, զինված անցնում էին ռուս-թուրքական սահմանը, գլխավորապես գնում էին Վանի վիլայեթ:

<sup>1</sup> Ե. քիյ. **Գեղամեանց**, Մտորումներ (հայ ազգի վիճակի մասին), Թիֆլիս, 1907, էջ 22:

<sup>2</sup> Ե. քիյ. **Գեղամեանց**, Յիշողութիւններ, «Լուսնայ» ամսագիր, խմբ. Գ. Աղանեան, Թիֆլիս, ապրիլ, 1906, թիւ 4, էջ 25:

<sup>3</sup> Գ. Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Եր., 2004, էջ 326:

Դեռևս 1878 թ. կովկասահայ մի խումբ զինված երիտասարդներ սահմանամերձ Իզդիր ավանից անցնում են Արևմտյան Հայաստան: Նրանցից ինն հոգանոց մի խումբ անցնում է Վան և տեղի երիտասարդության օժանդակությամբ հիմնադրում «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը<sup>4</sup>, որն իր առջև նպատակ է դնում թուրք-քրդական վայրագություններից պաշտպանել անզեն հայրենակիցներին: 1880 թ. Վան անցած մեկ այլ խմբի մասին իր հուշերում տեղեկություն է հաղորդում գրող Ատրպետը (Սարգիս Մուբայաճյան). «Կարս վերադարձից յետոյ լսեցի, որ առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Աղավանեանը 20-ի չափ երիտասարդներ է հավաքել, տարել է Վան... որպեսզի... խմբեր կազմակերպեն, ցոյցեր անեն, որ կառավարութեան միջամտութեան առիթ տան»: Ատրպետը նշում է նաև, որ առաջնորդի քարտուղար Դարբինյանն ու Մարտիրոս Ագրիպանյանը դեմ էին այս քայլին: Նրանք գտնում էին, որ պետք է քրոնոզության ճանապարհով Օսմանյան կայսրությունում բնակվող քրդերին հանել կայսրության դեմ, որ «բռնակալութիւնը փշրեն եւ ոչ իսլամ տարրը փրկեն տիրող մուսուլմանների չարաղէտ ցեղախմբերից»<sup>5</sup>:

Պետք է նշել, որ նման մտայնությունը, որն հետագայում որդեգրում է նաև Հ. Յ. Դաշնակցությունը, որևէ շոշափելի արդյունք չի տալիս: Քրդերը ոչ միայն չեն միանում հայերին՝ ընդդեմ Օսմանյան կայսրության, այլև սուլթան Աբդուլ Համիդի ձեռքին դառնում են գործիք հայերին հարստահարելու և բնաջնջելու համար:

Կովկասից Արևմտյան Հայաստան խմբեր ուղարկելուն դեմ են արտահայտվում նաև Երկրի գործիչները, որոնք Ատրպետին ուղղված նամակում «պահանջում էին հեռու մնալ այդպիսի անմիտ արշավանքից, զուր տեղը ոչ դրամ վատնեն, ոչ էլ տարտարոսի անդունդը գլորվեն»<sup>6</sup>:

Արևմտահայ որոշ գործիչների նման դիրքորոշումը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանում ստեղծված աննպաստ էթնոքաղաքական իրավիճակով: Այս մտածելակերպը հետագայում հաղթահարվում է, և արևմտահայերն իրենք են բանագնացներ ուղարկում Ռուսաստան՝ Օսմանյան կայսրության դեմ պայքարում խնդրելով արևելահայերի օգնությունը:

Զնայած նման հորդորներին՝ Անդրկովկասի հայությունը շարունակում էր նորանոր խմբեր ուղարկել Երկիր: 1880-ական թթ. սկզբներին երիտասարդության շրջանում ստեղծվել էր մի տեսակ «թունդ ազգասիրական մթնոլորտ», երբ «բոլորի մտահոգութեան առարկայ էր դարձել Հայկական խնդիրը եւ տաճկահայերի արեւով էին երդուում ամենքը»<sup>7</sup>:

1880-ական թթ. կովկասահայության վրա խոր ազդեցություն էին գործում ժամանակի պարբերական մամուլի մի շարք օրգաններ և հատկապես «Մշակ» թերթը: «Տաճկահայաստանից գրուած թղթակցութիւնները մեր մամուլի էջերում, գործուած բարբարոսութիւնների նկարագրութիւնները, ալան-թալանն ու սպանութիւնները Հայաստանի բոլոր ծայրերում, կոյսերի առեւանգումներն ու կանանց բռնաբարման դէպքերը ծայր աստիճան-

<sup>4</sup> Տե՛ս Ե. Ա.-քիյ. **Գեղամեանց**, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում կամ Հայկական հարցի վեցերորդ շրջանը, Բագու, 1915, էջ 442:

<sup>5</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1456, ց. 2, գ. 7, թ. 10:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> **Գ. Դարաջեան (Ս. Տ. Արկունեղ)**, Անցեալի յիշողութիւններից, Թիֆլիս, 1918, էջ 11:

նի յուզում ու վրդովում էին ամենքին Կովկասում», - հիշում է Ս. Կուկունյան-նի արշավախմբի անդամներից Բալաջանը (Ստեփան Ստեփանյան): Այս տարիներին կովկասահայության շրջանում տարածում գտած «դեպի Երկիր» գաղափարախոսության մասին Բալաջանը գրում է. «Մենք մտածում էինք, որ տաճկահայը տեսնելով մեր յեղափոխական պայքարը՝ ինքն էլ կ'ոգեւորուի...»<sup>8</sup>: Նման մտածելակերպը այսօր համարվում է անհրատեսական, բայց 1880-ական թթ., երբ հայ ազատագրական զինյալ պայքարը նոր էր ձևավորվում, նման գաղափարները շատ բնական էին: Երիտասարդության շրջանում հատկապես ուժեղ էր Ռաֆայել Պատկանյանի և Ռաֆֆու ազդեցությունը:

Արևմտահայերին թուրքական տիրապետությունից ազատելու հարցում Ռաֆֆին մեծ հույսեր էր կապում Ռուսաստանի հետ: Նրա վեպերը, Եղիշե Գեղամյանի բնորոշմամբ. «վեպ լինելուց աւելի քաղաքական ծրագիր եւ ազիտացիա էին: Եւ մէծ ոգեւորութիւն առաջ բերին ժողովրդի մէջ»<sup>9</sup>:

Իրավացի է Լեոն, երբ 1880-ական թթ. այս շարժումը անվանում է «գրքային յեղափոխութիւն», քանի որ այդ ժամանակ հայ ազատագրական պայքարը դեռ կազմակերպված չէր, չունէր ղեկավարներ. «Տանողները միայն գրքերն էին. Ռաֆֆին, Գամառ-Քաթիպան, մասամբ եւ Գրիգոր Արծրունին»<sup>10</sup>:

Այսպիսով, արևելահայ երիտասարդները փորձում էին օգնության շտապել իրենց արևմտահայ եղբայրներին՝ առանց իմանալու, թե արդյոք արևմտահայությունը պատրաստ է իրենց ընդունելու, կամ թե Արևմտյան Հայաստանն ունի արդյոք էքոնոմիկական և ռազմական այն բոլոր պատրաստությունները, որոնք անհրաժեշտ էին պայքար սկսելու համար: Փաստերն ապացուցում են, որ Արևմտյան Հայաստանում այդ պայմանները չկային, փոխվել էր նաև նրա էթնիկ կազմը: Դեռևս 1860-70-ական թթ. Կովկասից թուրքիա են գաղթում 418.000 լեռնականներ՝ չերքեզներ, արխազներ, օսեր, ինգուշներ, չեչեններ, լեզգիներ, ավարներ և այլն, որոնցից 200.000-ը տեղակայվում է Արևմտյան Հայաստանի Սեբաստիայի, Տիգրանակերտի, Բիթլիսի, Վանի և մասամբ էլ՝ Էրզրումի շրջաններում<sup>11</sup>: Միայն Ադաբազարի սանջակում, որի ամբողջ բնակչությունը 17.000 էր, բնակություն է հաստատում 25.000 զինված չերքեզ: Ըստ մայրո Տրոտտերի և Էրզրումի վալուտվյալների՝ Էրզրումում հաստատվում է 10.000 ընտանիք (50.000 մարդ)<sup>12</sup>:

Թուրքական իշխանությունը արխազներին ու չերքեզներին՝ «ոտից գլուխ զինված այդ զանգվածին քշում էր հայկական վիլայեթները՝ հայ գյուղերին կից բնակություն հաստատելու համար»<sup>13</sup>: Այդպիսով, հայ գյուղացիության ուսերին էր ընկնում այդ բազմահազար չերքեզներին պահելու ծանրությունը: Այս ամենի մասին լեյտենանտ Չերմսայդը գրում է. «Կա-

<sup>8</sup> Դիան Յ. Յ. Դաշնակցութեան, յաւելած «Հայրենիք» ամսագրի, կազմեց Ս. Վրացեան, Ա. հատ., Պոսթըն, 1934, էջ 28:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 1296, ց. 1, գ. 51, ք. 7:

<sup>10</sup> Լեո, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 38:

<sup>11</sup> Տե՛ս Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 69:

<sup>12</sup> Տե՛ս Ս. Մարկոսյան, Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին, Եր., 1968, էջ 124:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 123:

րելի է կարծել, որ մենք վերադարձել ենք ժողովուրդների մեծ գաղթի դարաշրջանը»<sup>14</sup>:

1878 թվականից սկսած՝ Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում բնակություն է հաստատում նաև օսմանյան լուծր թոթափած Բուլղարիայից և Եվրոպայի այլ երկրներից Թուրքիա գաղթած մահմեդական բնակչությունը՝ բռնագրավելով արևմտահայերի ունեցվածքն ու լավագույն հողերը: Միայն 1879-1882 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում բնակություն է հաստատում ավելի քան 78 հազար թուրք<sup>15</sup>: Միևնույն ժամանակ շարունակվում է քրդական աշիրեթների զանգվածային ներհոսքը Արևմտյան Հայաստան: Օսմանյան իշխանությունները նրանց օգտագործում էին իրենց հայաջինջ քաղաքականությունն իրականացնելու համար: Սուլթան Աբդուլ Համիդը Հայկական հարցը վերջնականապես վերացնելու նպատակով որոշել էր արհեստականորեն իջեցնել Արևմտյան Հայաստանում բնակվող հայության թվաքանակը, իսկ Ռուսաստանի սահմանագլխին հուսալի հեմարան ունենալու համար անհրաժեշտ էր համարում այդտեղ ստեղծել մահմեդական հոծ բնակչություն: Այս մասին իռլանդացի պրոֆեսոր Էմիլ Դիլոնը Օսմանյան կայսրությունում կատարած իր անձնական դիտարկումների հիման վրա գրել է. «Ոչնչացման ծրագիրը ակնհայտորեն գործում է կանոնավոր և հաջող: Քրիստոնյա բնակչությունը ոչնչացվում է, գյուղերն ուրիշների ձեռքն են անցնում գրեթե նույնքան արագ, ինչքան զավեշտական օպերայի դեկորները...»: Իսկ անդրադառնալով Ալաշկերտի շրջանի հինգ հայկական գյուղերի հայաթափմանը՝ նա գրում է. «Հայերը (շուրջ 3000 մարդ - Կ. Հ.) մի քանի ամսվա ընթացքում այդտեղից բոլորովին քշվել էին այնպիսի միջոցներով, որոնք պետք է վերագրել թունդ ազդող միջոցների կատեգորիային»<sup>16</sup>:

Չնոռանանք նաև, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանից և հատկապես սահմանամերձ Ալաշկերտի ու Բասենի շրջաններից Կովկաս ու Ռուսաստան են գաղթում շուրջ 90.000 արևմտահայեր, իսկ 1878 թվականից հետո Կարսի մարզից զանգվածաբար Արևմտյան Հայաստան են տեղափոխվում հազարավոր մահմեդականներ, որոնք գլխավորապես բնակություն են հաստատում արդեն արևմտահայերից դատարկված Ալաշկերտի ու Բասենի շրջաններում: Այսպիսով, եթե Կիլիկիայում, Սասունում և Վանում բնակչության մեծ մասը հայեր էին, ապա մյուս շրջաններում վիճակը աղետալի էր: Այսպես՝ 1893 թ. դրությամբ Կարինի (երզրում) 40.000 բնակչից հայ էր 10.500-ը, Բիթլիսում՝ 30.000-ից՝ 10.000-ը, իսկ Մուշում 25.000 տնտեսությունից հայկական էր 10.000-ը<sup>17</sup>: Մահմեդական տարրը ոչ միայն կտրուկ փոխեց Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը, այլև շատ մեծ դեր խաղաց արևմտահայերի տնտեսության քայքայման գործում:

Իրենց բնակավայրերը լքած լեռնականները, Արևմտյան Հայաստանում ստանալով տեղական իշխանությունների աջակցությունը, սկսեցին

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 124:

<sup>15</sup> Տե՛ս **Հր. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 68:

<sup>16</sup> **Ս. Մարկոսյան**, նշվ. աշխ., էջ 129:

<sup>17</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», (ՀՍՍՀ ԳԱԱ հրատ.), հ. VI, եր., 1981, էջ 24:

թալանել ու կողոպտել հայությանը: Չերքեզներն ու քրդերը կարող էին հայերի հետ վարվել այնպես, ինչպես ցանկանում էին և դրա համար որևէ պատասխանատվության ենթակա չէին: Այդ մասին հյուպատոսական գեկուցագրերում կարդում ենք. «Չերքեզներն անպատիժ կողոպտում էին մեծ ճանապարհի վրա և տներում: Նրանք տերերին քշում էին իրենց սեփական հողից, հափշտակում բերքը, մինչդեռ հողի տերերը պետք է հողային հարկ վճարեին կառավարությանը այն հողերի համար, որ իրենք օգտագործել չէին կարող»<sup>18</sup>: Սպառազեն չերքեզները շատ անգամ գյուղերից դուրս էին վռնդում հայ գյուղացիներին ու տեղավորվում նրանց տներում: Նման պայմաններում արևմտահայությունը «տնտեսապես եւ ֆիզիքապես արդեն հասել էր իր վերջին աստիճանին: Ծեծ, անլուր հալածանք, բանտարկութիւն, աւար, կողոպուտ արդեն սովորական են դառնում»<sup>19</sup>:

Այս բոլոր վայրագությունները թուրք պաշտոնյաները տեսնում էին, բայց «բուրժուական խուլ եւ անտարբեր կը գտնուէին դէպի այդ բոլոր չարիքները, - կարդում ենք մի խումբ բաղեցիների՝ «Մշակ» թերթին ուղղված 1889 թ. հոկտեմբերի 20-ի մի թղթակցությունում, - առեւանգութիւն, սպանութիւն, հայ գիւղացու ցորենի եւ խոտի դէզերը կրակի տալը սովորական է դարձել ... ոչ մէկ ժամանակ չէր եղած, որ կառաւարութիւնն այսչափ պաղարիւնութեամբ դիտէր հայ ժողովրդի կրած չարիքները...»<sup>20</sup>:

Այս ամենը կանխելու նպատակով կովկասահայ երիտասարդությունը ձգտում էր հասնել Արևմտյան Հայաստանի՝ ազատագրական պայքարի ծավալման համար նպաստավոր շրջաններ՝ համեմատաբար հոծ հայ բնակչություն ունեցող Վան, Սասուն ու Ջեթուն, որտեղի հայությունն արդեն բարձրացրել էր ազատագրական պայքարի դրոշը:

Այսպես, 1878 թ. սուլթանական բռնակալության դեմ զինված ապստամբություն էին բարձրացրել զեթունցիները, որոնք, գերի վերցնելով թուրք կառավարչին (գայմագայմին) և նրա 22 պաշտոնյաներին, ապաստանում են լեռներում և «հերոսաբար պարտիզանական կռիվներ են մղում թուրքական կանոնավոր զորքերի դեմ»<sup>21</sup>: 1880 թ. ազատագրական շարժումներ են ծավալվում Վասպուրականում, Սասունում և Ալաշկերտում: Իսկ 1884 և 1886 թթ. ազատագրական շարժումները կրկին գլուխ են բարձրացնում Ջեթունում և Վանում: Բայց, լինելով իրարից անջատ և տարերային շարժումներ, դրանք ճնշվում են թուրքական իշխանությունների կողմից:

Բնական է, որ ազատագրական պայքարի փորձառություն ունեցող Վանի, Սասունի, Մուշի և Ջեթունի շրջանում պետք է պարարտ հող գտնեին արևելահայ երիտասարդության՝ ազատագրական պայքարի դիմելու կոչերը, որոնք համահունչ էին տեղացիների ձգտումներին: Բայց ազատագրական պայքար մղելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր ունենալ ժամանակակից զենք ու ռազմամթերք, ինչը տեղացին չուներ, իսկ եկվոր կովկասահայությունն էլ լավ չէր ըմբռնում այդ ամենը ձեռք բերելու դժվար

<sup>18</sup> Ս. Մարկոսյան, նշվ. աշխ., էջ 126:

<sup>19</sup> Մ. Աւետեան, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատենան եւ Ջօր. Անդրանիկ (վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով), Փարիզ, 1954, էջ 129:

<sup>20</sup> Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 410:

<sup>21</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 238, թ. 62-63:

րությունները: Տասնամյակներ էին անհրաժեշտ, որ ազատագրական պայքարի հայկական միջավայրը կարողանար ընկալել այս ամենը, իսկ մինչ այդ «դեպի Երկիր» կարգախոսը դարձել էր կովկասահայության ներքին անառարկելի համոզմունքը:

Հայության վիճակը կտրուկ վատթարացավ 1881 թ. մարտի 1-ին՝ Ալեքսանդր II-ի սպանությունից հետո, երբ գահ բարձրացավ Ալեքսանդր III-ը (1881-1894 թթ.): Ցարական արքունիքը հրաժարվեց հակաթուրքական քաղաքականությունից և, իր արտաքին քաղաքականության օրակարգ դարձնելով Հեռավոր Արևելքի խնդիրները, արդեն «...պետք ուներ թուրքիոյ բարեկամութեան»<sup>22</sup>: Ցարիզմի այս նոր քաղաքականությունը իր ընդգծված արտահայտությունը գտավ ցարի՝ 1881 թ. ապրիլի 29-ի ինքնակալության անասանելիության մասին մանիֆեստում, որի հրապարակումից և Մ. Տ. Լոռիս-Մելիքովի, Մ. Ա. Աբազայի ու Դ. Ա. Միլյուտինի հրաժարականներից հետո, երբ հրապարակն ամբողջովին մնաց սրբազան սինոդի ավագ դատախազ, մոլեռանդ հետադիմական Կ. Պ. Պոբեդոնոսցևի և նրա համախոհների տրամադրության ներքո, առավել ցայտուն դրսևորվեց ցարիզմի հետադիմական քաղաքականությունը: 1886 թ. փակվեցին մի շարք հայկական թերթեր, խիստ հսկողության տակ առնվեց պարբերական մամուլը, արգելվեց հայերի հրատարակչական, բարեգործական ընկերությունների գործունեությունը<sup>23</sup>: 1884 թ. ընդունված «Կանոնադրության» համաձայն՝ փակվեցին եկեղեցու միջոցներով գոյատևող հայկական 500 ծխական դպրոցները, իսկ մնացածներում խիստ կրճատվեցին հայոց պատմության և հայոց լեզվի ուսուցման դասընթացները: Առանց լուրջ հիմնավորման պետական պաշտոններից հեռացվեցին բազմաթիվ հայ «անհուսալիներ»: Ուժեղացան ճնշումները նաև աշխատավոր գյուղացիների և հատկապես արևմտահայ փախստականների նկատմամբ: «Գրաքննությունը, խստությունները, հալածանքներն ու հետապնդումները դառնում են սովորական բաներ Երևանում ու Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում և Կարսում: Հասարակական ու քաղաքական ազատության յուրաքանչյուր արտահայտություն փշրվում էր անողորմ ձեռքով: Ցարական մտրակը հարվածում էր ուսանողներին, բանվորներին, գյուղացիներին»<sup>24</sup>:

Այս ամենը խոր զայրույթ է առաջացնում ժողովրդի մեջ: «Ամենուրեք տեղի են ունենում բողոքի զանգվածային ցույցեր: Երևանում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում ցուցարարների և ոստիկանության միջև տեղի են ունենում զինված ընդհարումներ: Կոչեր են հրապարակվում ցարիզմի դեմ»<sup>25</sup>: Իսկ «Դեպի Երկիր» շարժումը գնալով ավելի մեծ ծավալ է ընդունում ու հետզհետե դառնում ավելի կազմակերպված: Այսպես, 1880 թ. Ալեքսանդրապոլում ստեղծվում է մի հանձնաժողով, որի անդամներն էին Կարապետ Իսահակյանը, աշուղ Ջիվանին (Սերոբ Լևոնյան), Նազարեթ Փահլևանյանցը, Յագոր Օհանյանցը և աշուղ Ջամալին (Մկրտիչ Տալյան): Հանձնաժողովը ցուցակագրում է այն երիտասարդներին, որոնք ուզում

<sup>22</sup> Ա. Ամուրեան, Ցարական «Օխրանա»-յի արխիվը, Ա. գիրք, Թեհրան, 1978, էջ 68:

<sup>23</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 238, թ. 70, տե՛ս նաև՝ Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 415:

<sup>24</sup> Ջ. Կիրակոսյան, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Եր., 1980, էջ 200:

<sup>25</sup> ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 238, թ. 70:

էին անցնել Երկիր, և առաջին խմբին (64 հոգի) զինում է այդ ժամանակ ռուս-թուրքական պատերազմից Ալեքսանդրապոլում մնացած թուրքական հրացաններով, այնուհետև կազմակերպվում է «գորահանդես», ուր խումբը «երդում է տալիս և ապա ներկա եղողների կեցցեների տարափի տակ ճանապարհ է ընկնում»<sup>26</sup>: Այնուհետև ջոկատը երեքօրյա զորավարժություն է կատարում Անիում և Կողբ գյուղի մոտով անցնում ռուս-թուրքական սահմանը: Շուտով Ալեքսանդրապոլում կազմավորվում է 60 հոգուց բաղկացած 2-րդ խումբը, որը դարձյալ մեկնում է Երկիր:

Կամավորական խմբեր կազմավորելու և Երկիր առաքելու համար հեղափոխական կոմիտեներ են ստեղծվում նաև Թիֆլիսում, Իգդիրում, Ախալցխայում և այլուր<sup>27</sup>: Հիշյալ դեպքերի մի ժամանակակից 1880 թ. հոկտեմբերին արձանագրում է. «Յեռագրերը լուր են բերում, որ Վանի գավառի հայերը ... ոտքի են կանգնել և զենքը ձեռքին հարձակողական դիրք են բռնել: Այս լուրերը մեծ ցնծություն գործեցին, և, ահա, ոչ միայն խնդակցության և ցնծության ցույցեր են երևում ամեն տեղ, այլև նվերներ են հավաքվում Վանի վիրավորների համար, ընկերություններ են կազմվում ... Երևանում, Ալեքսանդրապոլում, Իգդիրում և այլուր, որոնց նպատակն է օգնել հայոց շարժումներին, փող են հավաքում, զենք են ձեռք բերում, զինվորական լրտեսներ են ուղարկում Վանի կողմերը և այլն: Վաղարշապատում, Իգդիրում և ուրիշ տեղերում զինվորներ են հավաքվում, որ գնան Հայաստանի (Արևմտյան Հայաստանի – Կ. Հ.) հայերին օգնելու: Հաստատ հայտնի է, որ Ալեքսանդրապոլից և շրջաններից մինչև 100 հոգի մանր խմբերով և զինավորված անցել են սահմանը...»<sup>28</sup>:

1880 թ. հոկտեմբերի սկզբին Ալեքսանդր Մանուկյանի (Սարոյի) ղեկավարությամբ Կարսից Ալեքսանդրապոլ է գալիս 40 հոգուց բաղկացած կամավորների III խումբը, որին հաջորդում է ախալցխացիներից բաղկացած IV խումբը՝ «Մովսես Զիվտալարյանցի ղեկավարությամբ, 44 հոգուց բաղկացած, իրենց զենքերով պատրաստված և բավականին վարժված»<sup>29</sup>: Դեպքերին քաջատեղյակ ուսուցիչ Հ. Դուկասյանը վերոհիշյալ խմբերի մասին Ղազարոս Աղայանին ուղղված հոկտեմբերի 12-ի նամակում գրում է. «Այստեղից սեպտեմբերի երկրորդ կեսից մինչև վերջն 60-ի չափ զանազան կամաւորներ զինաւորուած անցան Տաճկաստան. անցեալ օրն էլ Ախալցխայից մի խումբ եկան, որ անցնին: Մեր կառաւարութիւնը թեւ ամեն ինչ գիտեր, ի-հարկէ, եւ տեսնում էր, բայց չիմանալու էր տալիս, եւ այսպիսով կարծես լռեցայն քաջալերում էր»<sup>30</sup>: Բայց այս խմբերից մի քանիսը, որոնք թափանցել էին Ալաշկերտ, համոզվելով, որ Վանում ապստամբություն գոյություն չունի, վերադառնում են, որից հետո կասեցվում է մյուս խմբերի շարժը:

<sup>26</sup> **Մ. Գ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Եր., 1955, էջ 177-178, **Նույնի**՝ Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Եր., 2002, էջ 159:

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1256, ց. 1, գ. 51, թ. 4-5, նաև՝ **Ե. Գեղամեանց**, Յիշողութիւններ, «Լուսնայ» ամսագիր, ապրիլ, 1906, թիւ 4, էջ 19-20:

<sup>28</sup> **Մ. Գ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., էջ 180:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>30</sup> **Գ. Ավագյան**, Ալեքսանդրապոլի հասարակական – քաղաքական կյանքը 1860-80-ական թվականներին (ատենախոսություն), Եր., 2010, էջ 122:

Սահմանն անցնելու փորձ է կատարում նաև Ռաֆֆու «Խենթի» հերոս Վարդանի (Սամսոն Տեր-Պողոսյան) ղեկավարած ջոկատը, բայց սահմանից վերադառնում է, քանի որ Վանի Վարազա վանքի առաջնորդ Սկրտիչ Խրիմյանի (հետագայում՝ 1892-1907 թթ. ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկ) սուրհանդակները հայտնում են, որ «Արևմտյան Հայաստանում այդ օրերին արտակարգ ոչինչ չի սպասվում»<sup>31</sup>:

«Արմենիա» թերթի համաձայն՝ Երկիր անցնելու նպատակով 1881 թ. Կարսի մարզում և Երևանի նահանգում կազմավորվում են «բաւական մեծ թուով հայ կամաւորների խմբեր», որոնցից «մի յառաջապահ խումբ յաջողեցաւ սահմանն անցնելով յառաջանալ մինչեւ Ալաշկերտ եւ հասնիլ Իւջ Քիլիսէ»: Բայց խմբապետը, տեսնելով, որ «...իրենց ծրագիրը երեւակայական է... աներեւութացաւ Իւջ Քիլիսէէն՝ իր հետ տանելով խումբի պէտքերին համար յանձնուած մեծագումար փողերը՝ անօթի ու թշուառ վիճակի մէջ թողնելով կամաւորների այդ խումբը»<sup>32</sup>, որը տեղացի հայերի օգնությամբ վերադառնում է Իգդիր:

Այս խմբերի սահմանանցման մասին լուրերը տարածվել էին Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում, և արևմտահայ «մաս մը երիտասարդներ կը խորհէին երթալ միանալ այդ բանակին, բայց կատարելապէս վստահ չէին այդ լուրերու ստուգութեան մասին»<sup>33</sup>: Այնուամենայնիվ, այս լուրերը «քանի մը երիտասարդներու մտքին վրայ անչափ խորը ազդած էին, որ գիշերները քուներնին կորսնցուցած ...կը խորհրդակցէին գործնական քայլ մը անել դէպի յեղափոխութիւն»<sup>34</sup>: Այդ երիտասարդներից հաջատուր Կերեկցյանը, Կարապետ Նշկյանը, Հակոբ Իշղալացյանը, Ալեքսան Էթելիկյանը, Հովհաննես Աստուրյանը և Եղիշե Թուրսունյանը մեկ տարի չանցած Երզրումում հիմնում են «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը, որը կապեր է ստեղծում Թիֆլիսի արևելահայ գործիչների, այդ թվում՝ Բագրատ Նավասարդյանի, գեներալ Դմիտրի Տեր-Ասատրյանի հետ: Վերջինս նույնիսկ ռուսական բանակների կողմից զինված օգնության հույսեր էր ներշնչում Թիֆլիսից Կարին վերադարձող «Պաշտպան հայրենյացի» անդամ Կարապետ Նշկյանին<sup>35</sup>: Նման հույսերը, անշուշտ, երազանքից այն կողմ չէին կարող անցնել, քանի որ Ռուսաստանին Արևմտյան Հայաստանը այդ պահին չէր հետաքրքրում: Բայց այն փաստը, որ արևելահայությունն իր ազդեցությունն էր ունենում արևմտահայության վրա, ապացուցում է, որ անտեղի չէին արևելահայ երիտասարդության՝ արևմտահայությանը ոգևորելու և պայքարի կոչելու ջանքերը:

Պետք է նշել, որ շարժմանը մասնակցում էին ինչպես գյուղացիներ, արհեստավորներ, այնպես էլ՝ բուրժուական վերնախավի ներկայացուցիչներ:

Կովկասահայերի մեջ սկսված այս շարժումները չէին վրիպում ցարական իշխանությունների աչքից, որոնք դրանք արգելելու միջոցներ էին ձեռնարկում: Այսպես, պետական քարտուղար Գիրսին ուղղված 1880 թ.

<sup>31</sup> Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Եր., 1965, էջ 237:

<sup>32</sup> «Արմենիա», ազգային-քաղաքական լրագիր, խմբ. Ս. Փորթուզալեան, Մարտել, յունուարի 10, 1891, թիւ 39:

<sup>33</sup> Յ. Մ. Նշկեան, Առաջին կայծերը. էջ մը Կարնոյ զարթօնքէն, 1930, էջ 113:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 115:

<sup>35</sup> Տես Ռ. Փ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 300:



հոկտեմբերի 8-ի թվակիր նամակում անդրադառնալով Արևմտյան Հայաստան անցնելու կովկասահայերի փորձերին՝ Կովկասի փոխարքա, իշխան Միխայիլ Նիկոլաևիչը դրանք կանխելու հրաման է տալիս. «Իմ կողմից առաջարկված է տեղական իշխանություններին՝ ամենախիստ միջոցառումները ձեռք առնել թույլ չտալու նման անձնավորություններին անցնելու սահմանից այն կողմ»<sup>36</sup>:

Այնուհետև կարծես թե որոշ ժամանակ դադարում է մեծաթիվ խմբերով Երկիր անցնելու շարժումը: Հետագա տարիներին Երկիր են անցնում անհատ գործիչներ կամ մի քանի հոգուց բաղկացած խմբեր:

1881 թ. «Հայասեր-Ազգասեր» խմբակի հանձնարարությամբ Երկիրն ուսումնասիրելու նպատակով Արևմտյան Հայաստան է անցնում դարալագյազցի Տեր-Գրիգորը (Խոսրով բիձա): Նրան հաջորդում է գանձակցի Կարապետ Փիլիպոսյանը, որը կապեր է հաստատում Վանի «Սև խաչ» կազմակերպության հետ, խոստանում սահմանից զենք անցկացնել ու հասցնել «Ձինակիր» խմբին<sup>37</sup>: 1883 թ. օգոստոսին Արսեն Թոխմախյանի հետ Երկիր են անցնում և Վարազա վանքի առաջնորդ Մկրտիչ Խրիմյանի հանձնարարականով բեղուն գործունեություն ծավալում Հայկ Օննիկը (Հայկ Մելիք-Դադյան), Տիգրան Փիրունյանը, Սանդալը (Ալեքսանդր Պետրոսյան): Վերջինս, սակայն, դժվարություններին չդիմանալով, շուտով վերադառնում է Թիֆլիս: 1880-ական թթ. կեսերին Երկիր են անցնում նաև Բագրատ Թավաքալյանը (Ձաքի), Լևոն Սարգսյանը, Ղարա-Մելիքը (Բարսեղ Մելիք-Գրիգորյան), Մկրտիչ Ղազարյանը և ուրիշներ: Նրանք Երկիր «կ'երթային թիրքական կամ քրտական տարազով» կամ «որպես պարզ ուխտաւորներ Մշոյ սբ. Կարապետի, ամիսներով կը շրջէին, կը դիտէին Երկիրը, ժողովուրդը, անցուդարձը, եւ կը վերադառնային, առանց շօշափելի հետք ձգելու ... Անոնց նպատակն էր արդէն՝ հետաքրքրութիւն յարուցանել կովկասահայերու մէջ դէպի թրքահայ ժողովուրդի վիճակը»<sup>38</sup>, - գրում է Մ. Վարանդյանը:

«Դեպի Երկիր» գաղափարախոսությունը և Օսմանյան կայսրության դաժան լծից արևմտահայերին ազատագրելու տենչը շուտով հանգեցնում են հեղափոխական կազմակերպությունների առաջացմանը ինչպես Կարսում, այնպես էլ Կաղզվանում և Ալաշկերտի գյուղերում: Կարսում 1885 թ. թերևս առաջին հեղափոխական կազմակերպության մասին հիշատակվում է Ատրպետի հուշերում, ուր նշվում է Կարսի նահանգապետ գեներալ Տոմիչին այդ կազմակերպության մասին տրված զեկուցման մասին և ավելացվում, որ «բարեբախտութիւն էր, որ միայն մի կօպերատիւի ցուցակն էր յայտնել, այնքան գաղտնի էր, որ նոյնիսկ ընկերներից շատերը չէին էլ հետաքրքրուել մանրամասնութիւնների մէջ ծանօթանալ»<sup>39</sup>:

Միևնույն ժամանակ, Մկրտիչ Սարյանի և Հարություն Տեր-Մարտիրոսյանի (Հունո) նախաձեռնությամբ Ալաշկերտի Թոփրակկալե գյուղում ստեղծվում է մի հեղափոխական մարմին, որի առաջին ժողովում որոշվում է Ալաշ-

<sup>36</sup> **Մ. Գ. Ներսիսյան**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., էջ 175:

<sup>37</sup> Տես **Յ. Ղազարյան**, Հայ ժողովրդի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում 1890-1922 թթ., հ. 1 (երկրորդ, վերամշակված հրատարակություն), Եր., 2007, էջ 540:

<sup>38</sup> **Մ. Վարանդեան**, Հ. 3. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 51:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 7, թ. 14:

կերտի մյուս «գիւղերում եւս ստեղծել յեղափոխական մարմիններ եւ ժողովուրդը պատրաստել ինքնապաշտպանութեան համար»: Անմիջապէս շրջիկ-քարոզիչներ են ուղարկվում «Ալաշկերտի հայաբնակ գիւղերը՝ յեղափոխական աշխատանքներ սկսելու համար»<sup>40</sup>: Հեղափոխական մարմինը հաջողութեամբ կապ է հաստատում շրջանի բոլոր հայկական գյուղերի վստահելի անձանց հետ, բայց որպէսզի իր գործունեությունը կառավարությունից գաղտնի մնա, որոշվում է մարմնի անդամներին՝ որպէս ժողովրդի ներկայացուցիչների ընտրել տալ Ալաշկերտի հայկական գյուղերում: Այսպիսով, գործիչները «թէ հեղինակութիւն ու դիրք կ'ունենային, թէ կառավարութեան վստահութիւնը շահած կ'լինէին ու կասկածներից զերծ կ'մնային»<sup>41</sup>:

Այս ծրագիրը հաջողութեամբ իրագործվում է Ալաշկերտի շրջանի Խաչլու, Խոցաբէկ, Ջետկան, Մուլա Սուլէյման, Խաստուր, Չլկանի, Եղնի թափա, Աշխալի, Ահմատ, Թոփրակկալէ, Դալի-բաբա և այլ գյուղերում, որոնց հեղափոխական մարմնի անդամները դառնում են նաև կառավարության պաշտոնյաներ, սակայն դրանց մի մասը հետագայում բացահայտվում է<sup>42</sup>:

1885-1886 թթ. Հունոն Ալաշկերտից անցնում է Իգդիր, ապա՝ Կաղզվան և այնտեղ ևս հեղափոխական քարոզչություն իրականացնում՝ այդ շրջաններում կապեր հաստատելով Բագրատ Թավաքալյանի (Ջաքի), բժիշկ Կաճաճյանի և Ջաքար Ալոյանի հետ: Այնուհետև Հունոն մշտական բնակություն է հաստատում Ալաշկերտի Խոհարեկ գյուղում<sup>43</sup>:

Սարգիս Հայկունու և Բարսեղ աղա Ջաքարյանի եռանդուն ջանքերի շնորհիվ հեղափոխական մարմին է կազմավորվում նաև Ղարաքիլիսայում:

1889 թ. գարնանը Հունոն Ալաշկերտում կազմավորում է իր խումբը, որի մեջ են մտնում նաև Արամայիս Ազնավուրյանը, Բադոն և Ալիկը: «Յունոյի խմբի կազմակերպութեան նպատակների մասին ես որոշ բան ասել չեմ կարող, - գրում է Ա. Ազնավուրյանը, - նախ այն պատճառով, որ այդ ժամանակ յեղափոխական մարմնի կարգադրութիւններն ու նպատակները խիստ գաղտնի էին պահուում ամենքից, երկրորդ՝ մենք դեռ նորելուկ երիտասարդներ էինք եւ մեզ չատ էլ հաշվի չէին առնում...: Բայց, երբ մի յետադարձ հայեացք են ձգում խմբի կազմութեան օրերի յեղափոխական եռուզեռի, մանավանդ ժողովրդի մէջ դէպի յեղափոխականն ու զէնքը արթնացած հետաքրքրութեան վրայ, գալիս են այն եզրակացութեան, որ Յունոյի խմբի կազմելու գաղափարը Ալաշկերտի յեղափոխական մարմինը յղացել էր պարզապէս բավարարելու համար ժողովրդի մէջ արթնացած այդ տրամադրութիւնները, եւ ահա մենք՝ նորելուկ երիտասարդներս, Յունոյի խմբի մէջ, զինուած 200-ական փամփուշտներով, ներկայացնում էինք ժողովրդին զէնքի փարած վերոյիշեալ հայի կենդանի պատկերը»<sup>44</sup>: Հունոյի այս խումբը Խաչլու գյուղից շարժվում է դէպի Ալաշկերտի հյուսիս-արևմտյան լեռնապարը: «Իմ տպաւորութիւնս այն էր, որ մի տեսակ յեղափոխական զորաշարժի փորձ էր արուում», - գրում է Ա. Ազնավուրյանը: Մոտ մեկ շաբաթ

<sup>40</sup> **Արամայիս Ազնավուրեանի** յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, աշուն, 1968, թիւ 3, էջ 62:

<sup>41</sup> Նույն տեղում, «Հայրենիք» ամսագիր, յուլիս, 1936, թիւ 9, էջ 104:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 104-105:

<sup>43</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 106:

<sup>44</sup> Նույն տեղում, օգոստոս, 1936, թիւ 10, էջ 77-78:

լեռներում զորավարժություններ անելուց հետո խումբը կրկին վերադառնում է Խաչու գյուղ:

1889 թ. ընթացքում Կարսի գծով Կովկասից Երկիր են անցնում մի քանի փոքրիկ խմբեր, որոնցից առաջինը երեք հոգուց բաղկացած (Ռաֆայել Մովսիսյան, Ստեփան Սապահ-Գյուլյան, Ալեքսան) խումբն էր, որը հասնում է մինչև Մուշ: Երկրորդը բաղկացած էր խոհարարներից՝ «Վարդապետ» Խաչատուր ղարաբաղցու ղեկավարությամբ, որը նույնպես հասնում է Մուշ, բայց խմբի անդամները ձերբակալվում են տեղական ժանդարմերիայի կողմից և հետագայում մեկ-մեկ վերադառնում Թիֆլիս<sup>45</sup>: Երրորդ խումբը բաղկացած էր ախալցխացիներից, որոնք, Արդահան - Օլթի ճանապարհով անցնելով սահմանը, մտնում են Արևմտյան Հայաստան, ուր խումբը բաժանվում է երկու մասի: Մի մասն ուղևորվում է Մերդենեկ, իսկ մյուսը՝ Թավուքար գյուղ: Թավուքար անցած խումբը կողոպտում է ճանապարհին հանդիպած մահմեդական բնակչությանը, որի պատճառով ընդհարումներ են տեղի ունենում խմբի անդամների և տեղացիների միջև<sup>46</sup>:

1889 թ. վերջին Հունոն անհետանում է Ալաշկերտից առանց խմբի անդամներին տեղեկացնելու: Բայց նա կապ է պահպանում Ալաշկերտի հեղափոխական մարմնի հետ: 1890 թ. սկզբին Հունոյին և իր խմբի անդամներից Ա. Ազնավուրյանին և Ավիկին տեսնում ենք Կաղզվանում, ուր Հունոն նոր խումբ է կազմում՝ ռուս-թուրքական սահմանն անցնելու ծրագրով: Այստեղ նրան աջակցում էին բժիշկներ Կաճաճյանն ու Մամիկոնյանը, տեղացիներից՝ Ջաքար Ասոյանը, նաև Էրզրումից այստեղ անցած երիտասարդ Արշակ Գավաֆյանը (ապագա նշանավոր հայդուկ Քեռին), որը ևս անդամագրվում է Հունոյի նորաստեղծ խմբին: Տղաներին մի շաբաթ անորոշության մեջ պահելուց հետո Հունոն նրանց հայտնում է, որ ինքը Ալաշկերտի հեղափոխական մարմնի կողմից նշանակվել է հրամանատար և իր խումբը վերակազմելուց ու լրացնելուց հետո պիտի առաջնորդի դեպի Մատռաբերդ: Խմբի անդամների թվում էին նաև բաբերդցի Հարություն աղա Սիրունյանը, նրա որդի Գրիգորը, Ղուկաս Տեր-Մինասյանը, ղարաբաղցի Արշակ Սարկինյանը և երկու վանեցի<sup>47</sup>: Կաղզվանում, ըստ Ս. Կուկունյանի խմբի ամբաստանագրի, Հունոյի խմբին է միանում նաև խնուսցի քաջ Արամի 12 հոգանոց խումբը<sup>48</sup>: Արշավախումբը, որի բոլոր անդամները զինված էին ռուսական «բերդանկա» հրացաններով, Կաղզվանից շարժվում է 1890 թ. ապրիլին: Խմբապետի օգնական է նշանակվում Հարություն Սիրունյանը: Հինգ ժամից խումբը հասնում է Թաքարինայի նշանավոր ժայռի ստորոտը: Այստեղ խումբը հաստատվում է Մատռաբերդ կոչվող ավերակ հին բերդում, որն ինքնապաշտպանության համար անառիկ դիրք ուներ, միաժամանակ «բոլոր ուղղութիւններով ճանապարհներ կային հեռանալու եւ նահանջելու կռուի ժամանակ»<sup>49</sup>, ինչը ևս նախատես-

<sup>45</sup> Տե՛ս **Ա. Ամուրեան**, Յովսէփ Մովսիսեանի (Արգամ Պետրոսեան) յուշերը Կուկունեան արշավախմբից, «Հայրենիք» ամսագիր, մարտ, 1934, թիւ 5, էջ 59:

<sup>46</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1456, ց. 2, գ. 7, թ. 32:

<sup>47</sup> Տե՛ս **Ա. Ազնավուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, օգոստոս, 1936, թիւ 10, էջ 80-81:

<sup>48</sup> Տե՛ս «Կուկունեան խմբի դատավարութիւնը (ամբաստանագիր)», «Դրօշակ», օրգան Դ. Յ. Դաշնակցութեան, ժընեւ, յուլիս-օգոստոս, 1912, թիւ 7-8:

<sup>49</sup> **Ա. Ազնավուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, օգոստոս, 1936, թիւ 10, էջ 82:

ված էր Հունոյի ծրագրում՝ թշնամու վրա հարձակվելու փորձի անհաջողության դեպքում:

Մատուռ սարը գտնվում էր Կարսի շրջանի Խորասան գավառակում՝ Ալաշկերտի լեռնաշղթայի մեջ՝ թուրքական սահմանին մոտիկ: Մատուռին կից գտնվող տարածությունը 20 վերստ շրջագծով անմարդաբնակ էր, իսկ ստորոտին կար մայրիների անտառ<sup>50</sup>: Հունոյի 15-25 հոգանոց խումբը մեկ ու կես ամիս մարզվում է Մատռաբերդում, և ինչպես Ա. Ազնավուրյանն է վկայում, «Յունոն շարունակ հրահանգում ու պատուհրում էր զգոյշ լինել, երբեք առիթ չտալ կռիւների որպէսզի թիւրք եւ ռուս կառաւարութիւնների ուշադրութիւնը չհրաւիրէինք մեզ վրայ, մինչեւ որ մեր թիւը այդ լեռների վրայ այնքան կը ստուարանար, ու մենք այնքան կը մարզուէինք յեղափոխական կռիւների համար, որ հետագային անվարան կը կարողանայինք անցնել Սասուն»<sup>51</sup>:

Սահմանի ռուսական հատվածի այս վայրերը գրավում են Թուրքիայից եկող որսորդների ուշադրությունը: Այդ պատճառով խումբը մի քանի ընդհարումներ է ունենում քրդերի հետ, որի ժամանակ սպանվում են նաև հետախուզական նպատակով այստեղ եկած մի քանի թուրքեր: Ժայռերի վրա կատարված մարզանքները, տեղաշարժերն ու պարենի պակասը ուժասպառ են անում մարտիկներին: Այդ պատճառով Հունոն իր օգնական Հարություն աղա Սիրունյանին երկու զինվորների հետ ուղարկում է Կաղզվան՝ պարեն և փամփուշտ բերելու: Այստեղից Ֆարիատ Սարգսյանը և մի քանի ուրիշ երիտասարդներ, ուտելիք և փամփուշտներ վերցնելով, շտապում են Մատռաբերդ: Բայց նրանց ճանապարհը կտրում են թուրք-քրդական զինված ջոկատները: Կաղզվանից եկած խումբը, բեռը թողնելով ճանապարհին, ստիպված դիմում է փախուստի՝ դեպի յուրայինները: Մատռաբերդը պաշարում են երեք կողմից: Հակառակորդը առանց հսկողության է թողնում միայն բերդի արևմտյան մասը:

Առավոտից մինչև երեկո տևած հրաձգությունից հետո խումբը զիջերվա ժամը 12-ին շարժվում է դեպի արևմուտք: Խմբի ճակատագրով անհանգստացած կաղզվանցի գործիչները ռուսական ծառայության մեջ գտնվող թարգմանիչ Սերգեյ Տեր-Առաքելովից օգնություն են խնդրում: Նա գնդապետ Դրաչովի կարգադրությամբ ռուսական ձիավոր մի ջոկատով մեկնում է կռվի վայրը և հասցնում ոչնչացնել խմբի թողած գրություններն ու նամակները: Այնուհետև խումբը, որը հասցրել էր թաքնվել ռուս սահմանապահների տեսադաշտից, հաղթահարելով դժվարանցանելի ժայռերը, գոտիներով կապվելով, իջնում է ցած: Այդ ժամանակ ծանր վնասվածքներ են ստանում վանեցի երկու մարտիկներ: Իջնելով լեռներից՝ նրանք հանդիպում են Կաղզվանից օգնության եկողներին և նրանց օժանդակությամբ բարեհաջող վերադառնում են Կաղզվան, տեղավորում վիրավորներին և թաքնվում ոստիկանությունից<sup>52</sup>: Ահա այսպիսի տխուր վերջաբան է ունե-

<sup>50</sup> Տե՛ս **Վ. Վալադեան**, Հրոսակապետ Յունոն, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1958, թիւ 4, էջ 44:

<sup>51</sup> **Ա. Ազնավուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, սեպտեմբեր, 1936, թիւ 11, էջ 115:

<sup>52</sup> Տե՛ս **Գ. Խուդինյան**, Հայ Յեղափոխական Դաշնակցության ծնունդը, Եր., 2000, էջ 79:

նուն «Մատռաբերդի արշավանքը»: «Թշնամու դեմ կռուելու ծարաւով ճանապարհուած խումբը վերադարձել էր մի ամիս յետոյ՝ տարտղնուած ու քայքայուած: Ցրիւ էին եկել խմբի բոլոր տղաները: Եւ գլուխն առնուն, Կաղզվանից հեռանուն է նաեւ խմբապետը՝ Յարութիւն աղան»<sup>53</sup>, - գրում է Վալադ Վալադյանը:

Սակայն ցարական ոստիկանութեանը հաջողվում է ձերբակալել խմբի անդամներից մեկին, որի մոտ հայտնաբերվում է մի նամակ՝ գրված Բաբր-սանդրապուլցի մի քահանայի ձեռքով: Նամակի բովանդակությունից ոստիկանությունը եզրակացնում է, որ Կաղզվանի հոգևորականությունը ևս մասնակից է եղել այդ դեպքերին և «Ցուցաբերել է բոլոր անհրաժեշտ օգնությունը Մատռայան գործի մասնակիցներին»<sup>54</sup>: Այլ փաստեր չունենալով՝ ցարական ոստիկանությունը շուտով փակում է «Մատռայան» գործը, բայց սկսում է իր ուշադրության կենտրոնում պահել հայ հասարակության շրջանում ծավալվող իրադարձությունները:

1890 թ. սկզբին «ուխտավորների» անվան տակ Կարսի գծով Արևմտյան Հայաստան են անցնում նախ Եփրեմ Դավթյանը (հետագայում նշանավոր հեղափոխական Եփրեմ Խանը) և Չարխչյանը, իսկ որոշ ժամանակ անց Երևան-Իզմիր-Ալաշկերտ-Մանազկերտ-Մուշ երթուղով՝ Հովսեփ Արղությանը (Իշխան), Մարտիրոս Մարգարյանը (Սաֆո), Արշակ Բարխուդարյանը, Լևոն Սարգսյանը և Երվանդ Բաբերյանը (Ջալլադ): Նրանք հանդիպումներ են ունենում Մշո սուրբ Կարապետ վանքի վանահայր, Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես վարդապետ Խարախանյանի և հայդուկապետ Արաբոյի (Առաքել, Ստեփանոս Մխիթարյան) հետ, որոնք խորհուրդ են տալիս խուսափել բացահայտ գործողություններից ու ապստամբական շարժումներից<sup>55</sup>: «Պետք է Երկրի մէջ բազմացնել ինքնապաշտպանական ոյժերը, - ասել էին նրանք: - Դրսից հարկաւոր չեն մարդիկ, այլ միայն զէնք եւ միջոցներ»: Տարոնի հոգևոր առաջնորդն «ուխտավորներին» խնդրել էր. «Յայտնել Կովկասի գործիչներին, որ առայժմ հայդուկային խմբեր չուղարկեն, այլ սպասեն աւելի յարմար ու պատեհ առիթի, որի մասին ինքը՝ առաջնորդը լուր պետք է ուղարկէր»<sup>56</sup>: Հետաքրքրական է այն փաստը, որ եթե «ուխտավորների» խմբի անդամներից Հովսեփ Արղությանը և Մարտիրոս Մարգարյանը հետագայում փորձում էին կասեցնել Սարգիս Կուկունյանի (Ավետիսյան) գլխավորած արշավանքը, ապա դրան հակառակ՝ Եփրեմ Դավթյանն ու Ջալլադը ընդգրկվում են Կուկունյանի արշավախմբում: 1890 թ. կազմավորվում և ռուս-թուրքական սահմանն է անցնում նաև ուսանող Սարգիս Կուկունյանի արշավախումբը: Ս. Կուկունյանի արշավախմբի նկարագրությունը համարելով առանձին ուսումնասիրության նյութ՝ այստեղ նշենք միայն, որ մոտ 85 հոգանոց այդ խումբը ռազմական տեսակետից անհաջող վերջաբան ունեցավ. խմբի մի մասը սահմանին ձերբակալվեց ռուսական իշխանությունների կողմից, իսկ մյուս մասը ցրվեց

<sup>53</sup> Վ. Վալադեան, Քեռին, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1959, թիւ 12, էջ 52:

<sup>54</sup> В. Тунян. Легенды и быты: охранка и Армения XIX – нач. XX вв. Ер., 2008, с. 25.

<sup>55</sup> Տե՛ս Ռ. Սեւեան, Հ. Յ. Դ. առաջին գործիչներն ու հերոսները, «Հայրենիք» ամսագիր, սեպտեմբեր, 1937, թիւ 11, էջ 141:

<sup>56</sup> Ռ. Խան-Ազատ, Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1927, թիւ 2, էջ 123:

Կարսի մարզի տարբեր գյուղերում՝ խուսափելով ձերբակալությունից<sup>57</sup>:

Այսպիսով, անդրադառնալով 1880-ական թթ. Կարսի մարզից Երկիր անցած խմբերին ու արևմտահայ ազատագրական պայքարի վրա նրանց ունեցած ազդեցությանը, հանգում ենք հետևյալ եզրակացության՝

1. 1878-1880-ական թթ. Երկիր անցած խմբերն ու անհատները արևմտահայության շրջանում ունենում են որոշակի ազդեցություն՝ օսմանյան լծի դեմ ազատագրական պայքար մղելու առումով:

2. Համակվելով ազատագրական պայքարի գաղափարներով՝ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում առաջ են գալիս մի շարք հեղափոխական խմբակներ ու կազմակերպություններ, որոնք փորձում են կազմակերպել արևմտահայության ինքնապաշտպանությունը թուրք և քուրդ հրոսակների հարձակումներից, իսկ մյուս կողմից կապեր են հաստատում արևելահայ հեղափոխական կազմակերպությունների ու խմբակների հետ՝ արևմտահայերին զինելու գործում ակնկալելով նաև նրանց աջակցությունը:

3. 1880-ական թթ. Երկիր անցած արևելահայ խմբերն ու անհատները լիովին չէին պատկերացնում ազատագրական պայքարի հետ կապված այն բոլոր դժվարություններն ու խոչընդոտները, որոնք ստիպված էին լինելու հաղթահարել իրենց պայքարի ճանապարհին՝ ինչպես զենքի ու զինամթերքի հայթայթման ու Երկիր փոխադրելու առումով, այնպես էլ ռուս-թուրքական համագործակցության արգելապատնեշի հաղթահարման գործում:

4. Երկիր անցած կամավորական խմբերը թուրքական իշխանությունների համար արևմտահայությանը նոր հալածանքների ու բռնաճնշումների ենթարկելու առիթ էին դառնում, ինչն իր հերթին դժգոհությունների տեղիք էր տալիս վերջիններիս շրջանում:

---

<sup>57</sup> Ս. Կուկունյանի գլխավորած արշավախմբի մասին տե՛ս «Կուկունեան խմբի դատաւարութիւնը», «Դրօշակ», 1912, թիւ 7-8, էջ 189-191, թիւ 11-12, էջ 280-282, նաև՝ **Ա. Ամուրեան**, Յովսէփ Սովսիսեանի (Արզամ Պետրոսեան) յուշերը Կուկունեան արշաւախմբից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1934, թիւ 1, էջ 116-125, թիւ 2, էջ 100-110, թիւ 4, էջ 79-89, թիւ 5, էջ 57-69, թիւ 6, էջ 108-123, թիւ 7, էջ 128-137, թիւ 8, էջ 97-107, թիւ 10, էջ 116-127, թիւ 11, էջ 106-127, թիւ 12, էջ 107-119, 1935, թիւ 3, էջ 91-114, նաև՝ *Արամայիս Ազնաւորեանի* յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1937, թիւ 4, էջ 144-149, թիւ 5, էջ 135-141, նաև՝ **Արամայիս (Տեր-Դանիելյան)**, Սարգիս Կուկունեան (կեանքն ու գործը), Դիւան Յ. Յ. Դաշնակցութեան, Բ. հատ., էջ 5-25, նաև՝ **Մ. Շաքիրեան**, Հայոց հասարակական շարժումների պատմութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1923, թիւ 5, էջ 27-39, թիւ 6, էջ 50-66, նաև՝ **Մ. Վարդանեան**, Կուկունեանի արշաւանքի մասին, «Դրօշակ», Փարիզ, 1930, թիւ 5, էջ 132-135, թիւ 6-7, էջ 168-173, թիւ 10, էջ 246-248, նաև՝ **Վ. Վալադեան**, Սարգիս Կուկունեանի արշաւանքը, «Հայրենիք» ամսագիր, 1957, թիւ 9, էջ 1-9, թիւ 10, էջ 23-32, թիւ 11, էջ 38-50, թիւ 12, էջ 57-70, նաև՝ **Ս. Վրացեան**, Կուկունեան արշաւանքը, «Յուշապատում Յ. Յ. Դաշնակցութեան (1890-1950 թթ.)», Բոստոն, 1950, էջ 272-279, նաև՝ **Գ. Խուրիդյան**, Սարգիս Կուկունյան, «ԼՅԳ», 1989, թիւ 11, էջ 24-35, նաև՝ **Կ. Եղիազարյան**, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման սկզբնավորման դերը Սարգիս Կուկունյանի՝ որպէս ազատագրական պայքարի նվիրյալի ձևավորման գործում, «ԲՀԱ», 2009, թիւ 2, էջ 248-253, **Նույնի**՝ Սարգիս Կուկունյանը և նրա գլխավորած արշավանքը, «Պատմա-բանասիրական հանդես», 2000, թիւ 1, էջ 69-84, **Նույնի**՝ Սարգիս Կուկունյանի խմբի դատավարությունը և նրա հետագա ճակատագիրը, «ԲՀԱ», 2006, թիւ 1, էջ 216-221, **Նույնի**՝ Սարգիս Կուկունյանի արշավանքը հայ ազգային-ազատագրական պայքարի խորապատկերում (ատենախոսություն), Եր., 2009, 158 էջ:

**Բանալի բառեր** – Արևմտյան Հայաստան, կամավորական խմբեր, ազատագրական պայքար, ռուս-թուրքական սահման, ռուսական իշխանությունների դիրքորոշում, Օսմանյան կայսրություն

**КАРАПЕТ АКОПЯН** – *Влияние первых добровольческих групп, перешедших русско-турецкую границу, на освободительное движение в Западной Армении.* – В 1880-е годы в Карсской области формировались группы добровольцев из восточных армян, которые нелегально проникали в Западную Армению. Там эти добровольцы развернули среди местного населения пропагандистскую работу, проповедуя освободительную борьбу против османского ига. Никто из них, однако, не представлял препятствий, неизбежно вставших перед ними на этом пути. Но, несмотря на многочисленные трудности, осложнявшие их деятельность, добровольческие группы оказали существенное воздействие на подъём освободительного движения в армянских вилайетах Турции.

**Ключевые слова:** *Западная Армения, добровольческие группы, освободительная борьба, русско-турецкая граница, позиция российских властей, Османская империя*

**KARAPET HAKOBYAN** – *The Influence of the First Voluntary Groups, Having Crossed the Russian-Turkish Border, on Western Armenian Struggle for Liberation.* – In the 1880s in the Kars Region a number of groups and individuals went to Western Armenia. They widely propagated the idea of inducing the struggle for liberation against Ottoman harness amidst Western Armenians. As a result, a number of revolutionary groups and organizations were formed in different parts of Western Armenia. However, the Eastern Armenian groups and individuals coming to the country didn't fully imagine all the difficulties and obstacles that they would have to overcome on the way of struggle for liberation.

**Key words** – *Western Armenia, volunteer groups, liberation struggle, the Turkish-Russian border, Russia's position, the Ottoman Empire*